

ՅԱԻԵԼՈՒԱՅ
ՄԱՍԻՍԼՐԱԳՐՈՅ

ԿՐԿՈՒՆԻՐԻ 24 ՕԴՈՍՏՈՍ 1870

ԳԻՆ 20 ՓԱՐՍ

ՀՈՍՏՈՒՆԻՐՈՒՄ 24 ՕԴՈՍՏՈՍ

Պէտքըն 2 սեպտեմբեր իրիկուն.
Պաշտօնական Միւնիստրէյմ, 2
սեպտեմբեր կէս օրէն մէկ ժամ առաջ.
Սթրասպուրկի մէջ գոյուած թըշ-
նամին այս առաւ ժամը 4ին սաստիկ
բայց ոչ այնչափ զնաւակար կրակ մը
ընել սկսաւ իր բոլոր ճակատէն. մեր
թնդանօթածիղներուն կողուտը յայտ-
նի չէ, բայց մեծ ըլլաւ չէ:

Միւնիստրէյմ թնամին քաղաքէն
դուրս յարձակում մ'ըրաւ վաքէնի
կողմէն եւ երկաթուղիի կայարանն
վրայ. բայց մեր Պէնձ գնդապետը Պա-
տէնի ռմբակներուն երկրորդ գուն-
դին մէկ վաշտով թնամին կայարա-
նէն բերդը քշեց:

Այս գունդէն 30ի չափ մարդ սպան-
նուեցան ու վիրաւորեցան: Վաքէնի
գէմ յարձակումն ալ 30րդ գունդին
ձեռքը ետ քշուեցաւ. մէկ պաշտօնա-
կալ մ'եւ չորս որսորդ. զինուոր գերի
բռնուեցան:

Խրամին երկրորդ գիծը գրեթէ
ընցած է:

Հոնարա 2 սեպտեմբեր.
Ապերտրին կոմսն երէկ գիպուա-
ծով խղճուեցաւ:

Պէտքըն 3 սեպտեմբեր առաւօտ.
Պաշտօնական թաղաւորն առ թա-
գունին:

« Սէտանի առջեւ 2 սեպտ. իրիկուն
« Անձնատուր ըլլաւ. պայմանադ-
րութիւնը, որով թնամին (գաղ-
ղիացեաց) բոլոր բանակը պատերազ-
մական գերի կ'ընայ, հիմա կ'ընու-
ցաւ վիմրփէն զօրապետին հետ, որ
Մաք—Մահն վիրաւորուած ըլլաւ.
պատճառաւ՝ անոր տեղը բանակին
հրամանատարութիւն կընէ:

« Կայսրն ինձի անձնատուր եղաւ.
միմիայն իր անձին համար, վասն զի հը-
րամանատարութիւնն իր վրայ չէ, եւ
ամեն բան փարիզի խնամակարութեան
կը թողու: Իր բնակելիք տեղը՝ իրեն
հետ հիմա ընելիք տեսակցութենէս
ետեւ պիտի որոշեմ:

« Ինչ փոփոխութիւն Աստուածա-
լին նախախնամութեան ձեռքը: »
ԿիՅՈՄ »

Փարիզ 3 սեպտ. կէս օրէն երկու
ժամ ետքը:

Օրէնագրական ժողովին մէջ Բալի-
քաօ կոմսն ըսաւ. —Ծանր դէպքեր
վրայ եկան. առնուած լուրերը պաշ-
տօնական չեն, բայց ստոյգ. պէտք է
ըլլան. այն լուրերէն կը հասկցուի որ
Պաղէն՝ Մէցէն դուրս խիստ զօրաւոր
յարձակում մ'ընելով՝ ինն ժամ թըշ-
նամին հետ կռուի է: Գաղղիացիք
վերջին ծայր քաջութեամբ կռուի են,
բայց վերջը Մէց քաջութեամբ ստիպուե-
ր են, որով փոփոխուած միացումը չ'ը-
ցաւ կատարուիլ. սակայն Պաղէն նո-
րէն դուրս յարձակում մ'ըրեր է:

Միւնիստրէյմ Մաք—Մահն Մէ-
զիէրի եւ Սէտանի մէջ տեղը ճակա-
տամարտ մը տուեր է, որ մերթ յա-
ջող եւ մերթ ձախող դացեր է. առաջ
մերթները Բրուսիացեաց յաղթելով
Մէզը գետը թափեր են զանոնք. յե-
տոյ շատ աւելի զօրութիւն վրային
գալով, ետ քաշուեր են: Կռուին ար-
գիւնքն այս եղանակով, որ մեր զօրաց
ներկայ գիրքը չ'ընդուն որ մինչեւ ժա-
մանակ մը Պաղէն, եւ Մաք—Մահն
իրարու հետ միմեանս վիճակը ծանր

է. պէտք չէ ծածկել. ուստի տոշեցինք
մեր բոլոր զօրութիւնները կանչել.
Նախ ազգային եւ շարժուն պահապան
զինուորները կազմեցինք, որոց թիւը
200,000 մարդու կը հասնի, եւ փարիզ
կանչուելով՝ մայրաքաղաքը կրնան ա-
պահովցնել: Մեր բոլոր ճիշդ պիտի
թափենք այս դործին մէջ, եւ չալիտի
դադրինք մինչեւ որ Բրուսիացեաց ազ-
գըն ամբողջապէս չ'ալածենք մեր
հողէն:

Նոյն թուական իրիկուն.

Օրէնագիր ժողովին մէջ Պ. Ժիւլ
Յալիւ ըսաւ. « Մերք ամենքս ալ հա-
մամիւս ենք մինչեւ ցմահ հայրենիքը
պաշտպանելու » (ժափահարութիւնք).
Ետոյ աւելցուց. « Եթէ կռուինք մեր
կրած ազգային ձախողութիւնը դար-
մանել, ապա թիւները պէտք է
գաղթեցնել »: Ասկէջ հետեւեցնելով
կայսերական իշխանութիւնը պարսա-
ւեց եւ առաջարկեց որ իշխանութիւ-
նը բոլորովին թրջուի եւ Բալիքաօի
ձեռքը արուի: Ժողովը բողոքեց այս
առաջարկութեան դէմ, եւ խնդիրը
զօրութեամբ Ետոյ իրեն ստիպու-
կան ընդունուեցաւ: Կառավարութեան
ներկայացուցած առաջարկութիւնը,
որ 20էն 35 տարեկան զոռ բոլոր գաղ-
ղիացիները, ամբողջացաւ կամ ոչ,
ի դէն կը կռւէ, նոյնպէս մինչեւ 60
տարու եղող բոլոր հին զինուորներն
ու պաշտօնականները:

Ծերակուտի ժողովին մէջ ալ Պա-
րոն Տալիւս Բալիքաօ կոմսն առաւ
տեղեկութիւնները տուաւ եւ աւել-
ցուց. « Մեր ձեռքը մնացած միջոցնե-
րը բաւական հզօր ըլլալով, կրնանք
աղքու ջանքով եւ ազգին գործակ-
ցութեամբ վերջին խօսքը մենք ըսել
կը յուսանք որ Աստուծոյ օգնութեամբ
թնամին կը վաճենք: »

Հասարակային շինութեանց պաշ-
տօնային ալ յետոյ ըսաւ թէ փարիզ
պատրաստ եւ կ'աւելի է թնամին ա-
մեն ջանքը դիմանալու: « Փարիզը
պիտի պաշտպանենք ամբողջութեան
բուն վրայ, փողոցներուն մէջ, եւ եթէ
պէտք ըլլայ, ինքզինքնիս անոր փա-
տակներուն ներքեւ պիտի թաղենք: »
(Ծափահարութիւնք):

Վիեննա 3 սեպտեմբեր.

Երեսփոխանաց ժողովին բացուիլը
ետ ձգուեցաւ մինչեւ հոկտեմբեր 15:

Փարիզ 4 սեպտեմբեր.

Պաշտօնական Օպյտարարութիւն

Պաշտօնէի խորհրդին.

« Գաղղիացիք »

« Մեծ դժբաղդութիւն մը կը
հարուածէ հայրենիքը: Մաք—Մահ-
նի բանակը երեք հարիւր հազար թըշ-
նամեաց գէմ երեք օր դիւցազնա-
բար պատերազմելէ ետեւ՝ քառասուն
հազար հոգի գերի ինկան: Վիմր-
փէն զօրապետը, որ Մաք—Մահն
մարաջախտի տեղ բանակին հրա-
մանատարութիւնը վրան տուած էր,
որովհետեւ Մաք—Մահն ծանր կեր-
պով վիրաւորուած էր, անձնատու-
թեան դաշնագիրը կնքեց: Այս ան-
գութ ձախողութիւնը չ'ախտեր մեր
քաջասիրտութիւնը. փարիզ այսօր
պաշտպանութեան վիճակի մէջ է:
Գաղղիացի զինուորական զօրութիւն-
ները կը կազմուին. քիչ օրէն նոր բա-
նակ մը պիտի գտնուի փարիզի պատե-
րուն տակ. ուրիշ մ'ալ կը կազմուի

Լաւա դետին եղերքը: Չեր հայրե-
նախորթութիւնը, ձեր միութիւնն ու քա-
ջութիւնը պիտի փրկէ Գաղղիա: Կայս-
րը գերի բռնուեցաւ. պատերազմին
մէջ, կառավարութիւնը հասարակային
իշխանութեանց հետ համաձայնու-
թեամբ այս ծանր անցքերուն պահան-
ջած ամեն միջոցները ձեռք կ'առնու:

Մարտի 24 1870 թ. Գաղղիացիք
Նոյն թուական, կէս գիշերը 3
ժամ 35 րոպէ անցած:

Օրէնագիր ժողովը մէջ կէս գիշե-
րէն 1 ժամ ետքը Բալիքաօ կոմսն ի-
մացուց թէ մեր զօրաբանակներէն մէ-
կը Սէտանի մէջ քշուեցաւ, երկրորդ
զօրաբանակ մ'անձնատուր եղաւ, եւ
կայսրն ալ գերի ինկաւ: « Այս լուրե-
րուն առջեւ, ըսաւ պաշտօնային, ան-
հրնար է մեզ վիճարանութիւն բանալ
այս դէպքին հարաւոր հետեւու-
թիւններուն վրայ, եւ պաշտօնային
գետ չ'ընալով խորհուրդ ընել, կը
խնդրեմ որ վիճարանութիւնը վաղուան
թողուի: »

Պ. Ժիւլ Յալիւ առաջարկութիւն
մը ներկայացուց յայտնելով որ կայսրն
եւ իր ազգատոհմն ինկած են այն ա-
մեն իրաւունքներէն որ սահմանադ-
րութիւնը տուած է: Եւ առաջարկեց
որ օրէնագրական յանձնաժողով մը
կազմուի կառավարական իշխանու-
թեամբ, եւ պաշտօն ունենայ թնա-
մին Գաղղիացի հողէն վաճելու: Թրո-
շիւ ալ փարիզի ընդհանուր կառավա-
րիչ մնայ: Այս առաջարկութիւնը խոր
ընթացքով ընդունուեցաւ. եւ ժողովը
որոշեց որ այսօր՝ կիրակի կէս օրին նո-
րէն գումարուի:

Փարիզ 4 սեպտեմբեր կէս օրը
երեք ժամ 55 րոպէ անցած:

Ժողովուրդը Օրէնագիր ժողովին
ընտրելու ետքն ալ տտեանը լցուելով,
անձնական կառավարութեան իշխան
ու հասարակապետութեան հրատարա-
կումը պահանջեց: Երեսփոխաններէն
չատերը մեկնեցան ժողովէն: Պ. Դամ-
պէթ թա եւ ուրիշներ խնդրեցին ժո-
ղովուէն որ ժողովին խորհրդակցու-
թեանց ազատութիւնը յարգեն, եւ
յուր թեամբ միմիկ ընեն, բայց ջան-
քերնին անօգուտ եղաւ: Եւ զմոռն
աննկարագրելի է: Դուրսը մեծ եւան-
դով կեցցէ հասարակապետութիւն կը
պօռան ժողովուրդը, ազգային պահա-
պան զինուորներն ու զօրականները եւ
կ'եղբայրակցին իրարու հետ կամայէթ
թա եւ ուրիշ ձախողութեան երեսփոխան-
ներ Նարթէնեան կառավարութեան
անկումը կը հրատարակեն, եւ կըսուի
թէ ձախողութեան պատգամաւորու-
թիւն մը ժողովուրդին հետ Բալիքաօ-
պետական պալատն երթալով առժա-
մանակեայ կառավարութիւն մը կազ-
մեր են հետեւեալ անձերէ: Թրոշիւ,
Կամպէթ թա, Սիմօն, Բէլթան, Ժիւլ
Յալիւ, Ժիւլ Ֆիլի, Բէրարթի, Բրէմիէօ,
Բիքաւ, Կրէվի:

Նոյն թուական, կէս գիշերէն
մէկ ժամ առաջ:

Անթիւ բաղնիքին լցուած է քա-
ղաքապետի պալատին հրատարակելու
չըջակաց փողոցներուն մէջ, եւ միաձայն
հասարակապետութիւն կը հրատարա-
կեն: Եւ հաւաստեն թէ առժամանակե-
այ կառավարութիւնը կազմուեր է:
Ինչաւ անկարգութիւն մ'եղած չէ: